

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
18.02.2019թ. «ԼԵՆԴՄԱՐԿ ԿԱՊԻՏԱԼ» ՓԲԸ-ի հիմնադիր ժողովի կողմից
Գործադիր տնօրեն՝ Իրինա Տեր-Աբրահամյան

**«ԼԵՆԴՄԱՐԿ ԿԱՊԻՏԱԼ» ՓԲԸ
ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ
ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀՆԱՐԱՎՈՐ ՇԱՀԵՐԻ ԲԱԽՄԱՆ
ԲԱՑԱՌՄԱՆՆ ՈՒ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ
ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ**

1. ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԿԻՐԱՌՄԱՆ ՈԼՈՐՏԸ

1.1. Սույն ընթացակարգը սահմանում է՝

- Ներդրումային ընկերության, ներդրումային ընկերության աշխատակիցների կամ վերջիններիս և/կամ ներդրումային ընկերության հետ կապված, ինչպես նաև այլ անձանց և Հաճախորդների շահերի բախման հնարավոր դեպքերը
- շահերի բախման բացառման և կանխարգելման հետ կապված ներդրումային ընկերության, ներդրումային ընկերության աշխատակիցների պարտականությունները.
- Ներդրումային ընկերության կողմից շահերի բախման բացառմանն ու կանխարգելմանն ուղղված միջոցառումները:

1.2. Սույն ընթացակարգն ուղղված է ապահովելու՝

- ներդրումային ընկերության Հաճախորդների շահերի գերակայության ապահովումը ներդրումային ընկերության, ներդրումային ընկերության աշխատակիցների կամ վերջիններիս և/կամ ներդրումային ընկերության հետ կապված, ինչպես նաև այլ անձանց անձնական շահերի նկատմամբ,
- Շահերի բախման հնարավոր դեպքերի, ինչպես նաև դրանց հետ առնչվող այլ ռիսկերի կանխարգելումն ու բացառումը,
- Ներդրումային ընկերության պարտավորությունները՝ գործելու ազնիվ և անկողմնակալ բանկի Հաճախորդների և գործընկերների հետ:

2. ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

2.1. Ներդրումային ընկերություն - «ԼԵՆԴՄԱՐԿ ԿԱՊԻՏԱԼ» ՓԲԸ

2.2. Հաճախորդ - Անձ, որն օգտվում է ընկերության ներդրումային ծառայություններից, կամ որը դիմել է ներդրումային ընկերությանն այդ ծառայություններից օգտվելու նպատակով

3. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Ներդրումային ծառայությունների մատուցման գործընթացում ներգրավված աշխատակիցները առաջնորդվում են սույն ընթացակարգով, ընկերության այլ

ներքին ընթացակարգերով, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ՝ շահերի բախման կանխարգելմանն ուղղված միջոցառումների պահպանման նպատակով:

3.2. Ներդրումային ընկերության յուրաքանչյուր աշխատակից, որին իր իրավասությունների շրջանակում հայտնի է դարձել ներդրումային ծառայությունների մատուցման ընթացքում ի հայտ եկած կամ հնարավոր շահերի բախման մասին տեղեկատվություն, պարտավոր է տեղեկացնել դրա մասին իր ստորաբաժանման ղեկավարին, որն էլ իր հերթին տեղեկացնում է Ընկերության ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարին:

3.3. Ներդրումային ծառայություններ մատուցելիս ընկերությունը պետք է առաջնորդվի Հաճախորդների շահերի գերակայության սկզբունքով: Հաճախորդների պատվերները կատարելիս Ներդրումային ընկերությունը գործում է ելնելով բացառապես Հաճախորդի լավագույն շահերից:

3.4. Ներդրումային ծառայություններ մատուցելիս ընկերության աշխատակիցները պարտավոր են վեր դասել ընկերության Հաճախորդների շահերը սեփական կամ ընկերության շահերից և խուսափել այնպիսի գործարքների կնքումից, որոնք կարող են բացասական ազդեցություն ունենալ Հաճախորդի շահերի վրա:

3.5. Արժեթղթերի շուկայում գործառնություններ իրականացնելիս Ներդրումային ընկերությունը պարտավոր է Հաճախորդների արժեթղթերով և դրամական միջոցներով իրականացված բոլոր գործարքների վերաբերյալ վերջիններիս տեղեկացնել այդ գործարքների մասին:

4. ՇԱՀԵՐԻ ԲԱԽՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐ ԴԵՊՔԵՐԸ

4.1. Ներդրումային ծառայությունների մատուցման ընթացքում առաջացող շահերի բախման հնարավոր դեպքերն են՝

- Հաճախորդին շուկայականից ավելի բարձր գնով արժեթղթերի վաճառք Ընկերության, Ընկերության աշխատակիցների կամ վերջիններիս և/կամ Ընկերության հետ կապված, ինչպես նաև այլ անձանց սեփական պորտֆելից՝ առանց հաշվի առնելու Հաճախորդի ներդրումային նպատակները և Հաճախորդի կողմից Ընկերության ներկայացված պատվերում նշված էական պայմանները,

- Հաճախորդին պատկանող արժեթղթերի վաճառք շուկայականից ավելի ցածր գնով Ընկերության, Ընկերության աշխատակիցներին կամ վերջիններիս և/կամ Ընկերության հետ կապված, ինչպես նաև այլ անձանց,
- Հաճախորդի միջոցների ներդրում Ընկերության, Ընկերության աշխատակիցների և/կամ Ընկերության հետ կապված անձանց պատկանող արժեթղթերում,
- Հաճախորդին պատկանող արժեթղթերով Ընկերության, Ընկերության աշխատակիցների և/կամ Ընկերության հետ կապված, ինչպես նաև այլ անձանց օգտին իրականացվող այլ գործարքներ շուկայական գներին չհամապատասխանող գներով կամ անտեսելով Հաճախորդի ներդրումային նպատակները,
- Հաճախորդին այնպիսի խորհրդատվության մատուցում, որի արդյունքում կնքված գործարքները բխում են Ընկերության, Ընկերության աշխատակիցների կամ վերջիններիս և/կամ Ընկերության հետ կապված, ինչպես նաև այլ անձանց շահերից,
- Մեծ ծավալներով կամ Հաճախորդի շահերին չհամապատասխանող գործարքների կնքում՝ Հաճախորդից ավելի մեծ ծավալներով միջնորդավճարների և այլ վճարների գանձման նպատակով,
- Հաճախորդի միջոցների օգտագործում Ներդրումային ընկերության սեփական առևտրային ռազմավարությունն իրականացնելու նպատակով,
- Ընկերության համապատասխան հաշիվներում հաշվառվող և ներդրումներ իրականացնելու համար նախատեսված Հաճախորդի միջոցների կանխամտածված պահում՝ Ընկերության սեփական առևտրային ակտիվ գործառնությունների իրականացման նպատակով,
- Էական նշանակություն ունեցող և արժեթղթերի շուկայի գնագոյացման վրա ազդելու հնարավորություն ունեցող՝ Հաճախորդի կողմից ստացված ծառայողական տեղեկատվության օգտագործում ի շահ Ընկերության, Ընկերության աշխատակիցների կամ վերջիններիս և/կամ Ընկերության հետ կապված անձանց,

- Ցանկացած այլ իրավիճակ, որի դեպքում Հաճախորդի շահերը հակասության մեջ են մտնում այլ Հաճախորդների, Ընկերության, Ընկերության աշխատակիցների կամ վերջիններիս և/կամ Ընկերության հետ կապված անձանց շահերի հետ:

5. ՇԱՀԵՐԻ ԲԱՇԽՄԱՆ ԲԱՑԱՌՄԱՆ ԵՎ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

5.1. Ներդրումային ծառայությունների մատուցման ընթացքում Ընկերության, Ընկերության աշխատակիցների և/կամ Ընկերության հետ կապված, ինչպես նաև այլ անձանց և Հաճախորդների միջև հնարավոր շահերի բախման բացառման նպատակով Ընկերությունում իրականացվում են հետևյալ միջոցառումները և սահմանափակումները՝

- Ընկերության աշխատակիցների, Ընկերության հետ կապված, ինչպես նաև այլ անձանց և Հաճախորդների պատվերների հիման վրա գործարքները կնքվում են բացառապես ՀՀ օրենսդրության և Ընկերության ներքին ընթացակարգերով սահմանված կարգով,
- Ընկերությունն իրավունք ունի չկատարել հաճախորդի պատվերը (վերջինիս հնարավորինս շուտ տեղեկացնելու պայմանով), եթե պատվերի կատարումը հակասում է ՀՀ օրենսդրության պահանջներին,
- Ընկերության համապատասխան աշխատակիցներին արգելվում է կատարել Ընկերության սեփական գործարքները, նույն էական պայմաններով ներկայացված Ընկերության աշխատակիցների Ընկերության հետ կապված, ինչպես նաև այլ անձանց կամ Հաճախորդի պատվերը մեկ այլ Հաճախորդի պատվերից շուտ, բացառությամբ եթե պատվերի բնութագրիչները կամ շուկայում ստեղծված իրավիճակը դա անհնարին են դարձնում,
- Ընկերության աշխատակիցները պարտավոր են անվերապահորեն հետևել ծառայողական տեղեկատվության պահպանման և ստորաբաժանումների միջև տեղեկատվության փոխանակման՝ ՀՀ օրենսդրությամբ և Ընկերության ներքին ընթացակարգերով սահմանված պահանջներին,
- Ընկերության աշխատակիցներին արգելվում է Հաճախորդին տրամադրել այնպիսի խորհրդատվություն արժեթղթերի շուկայում գործարքներ կնքելու

վերաբերյալ, որի վերջնական նպատակն է ի օգուտ Ընկերության շահերին գործարքներ կնքելու համար բարենպաստ պայմանների ստեղծում, կամ որը հակասում է ներդրումային ծառայություններ մատուցող անձանց գործունեության նկատմամբ ՀՀ օրենսդրության պահանջներին,

- Ընկերության աշխատակիցներին արգելվում է իրականացնել Հաճախորդի շահերից չբխող գործարքներ, որոնց վերջնական նպատակը տվյալ Հաճախորդից հօգուտ Ընկերության գանձվող միջնորդավճարների և այլ վճարների ծավալների մեծացումն է,

5.2. Ցանկացած իրավիճակում, որն առաջացնում է կամ կարող է առաջացնել շահերի բախում, Ընկերությունը պետք է՝

- ձեռնպահ մնա իր և իր Հաճախորդների միջև շահերի բախման առարկա հանդիսացող գործարքների կնքումից՝ դրա անհնարինության դեպքում նախապատվությունը տալով Հաճախորդի շահերին,
- ձեռնարկի բավարար միջոցներ իր և իր Հաճախորդների կամ իր տարբեր Հաճախորդների միջև շահերի հնարավոր բախումները կանխելու համար: